ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2023թ. նոյեմբերի 9 -ին, N 470-Ա ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԼԵՌՆԱՊԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետով, 13-րդ հոդվածի 2-րդ կետի «դ» ենթակետով և 3-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և հիմք ընդունելով «Լեռնապարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2023 թվականի նոյեմբերի 6-ի գրությունը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2017 թվականի հոկտեմբերի 26-ի N 172-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Լեռնապարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

   1) 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

   «4 Դպրոցի գտնվելու վայրն է մարզ Արագածոտն, համայնք Ծաղկահովիտ գյուղ Լեռնապար 1-ին փողոց 23 շենք:»:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Լեռնապարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ իրականացնել սույն որոշմամբ հաստատված կանոնադրության փոփոխության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Восстановимая подпись

VERIFIED OCSP 11/10/2023 09:51:30 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս ՄՈՎՍԻՍՅԱՆ